71. ՋԱԴՈՒՔՅԱՐ ՊԱՌԱՎ

Կէղնի ու չէղնի իրիկ մի ու կնիկ մի կէղնի։ Շատ սիրով կէղնին իրարու խետ։ Սատանեն կիմնա օր թե շատ սիրով են իրարու խետ։ Ինչ կենա, չը կանար էտոնց սեր բըթլեր[1]։ Յոթ տարի կաշխատի, էլման չկանար էտոնց սեր բըթլեր։ Շիվար ննկանի էտոնց տան դռան։

Պառավ մի ճամխուց կու գա, կտեսնի օր սատանեն կանուկ էր էտոնց դռան։

— Հա՜յ, սատանա, ի՞նչ կէնիս էտ տեխ,—պառավն ըսեց։

Սատանեն ըսեց պառվուն թե.—Ի՞նչ էնիմ, էս տեխ յոթ տարի կաներ կպտոտվիմ, չեմ կընա էս տան միչեն իրիկ ու կնդան սեր բըթլեմ։

— Ի՞նչ կուտաս ընձի օր չորս սահաթվան մեչ բըթլեմ։

— Ի՛նչ օր կուզես՝ կուտամ, փարա կուզես, մալ կուզես՝ կուտամ։

— Դե, դու հ'ասօր գնա, խըլիսուն արի, էսոնց խաղքութեն տես, օր կխանեմ էսոնց գլոխ։

Սատանեն էն տեղեն գնաց, պառավ ներս մտավ։

— Բարև քեզ, խարսնիկ ջան,—կնգան ըսեց,—իմա՞լ ես, աղե՞կ ես։

Մաժեց ու մաժմռտեց կնգա գլոխ, ծամեր։

— Աղեկ ենք, մայրիկ,—ըսաց կնիկը,—կապրինք։

---

1 Լուծել, ավերել (Ս. Բ.)։

— Ա՜խ, լո, աչքերսի քոռնա, իրկանդ ի բախտ ու էղբալ կապուկ ա, էնոր բախտ կանա՞ս բանաս։

— Մայրիկ, ի՛մալ բանամ, բան մի սովըրցուր՝ օր բանամ։

— Լո՛, քու իրկան էրես սըպտակ մազ մի կա, օր գողտուտ, գիշեր բնուկ տեղ փրցուցես, շատ աղեկ քու իրկան բախտն էլ կըրացվի, գործն էլ աջող կէրթա։

— Դե, մայրիկ, մեռնիմ քե, ասա, իմա՞լ կտրեմ։

— Լո, արծիլի[1] ո՞ւնիս։

— Չէ, մայրիկ, հ'ուրտից արծիլի ընձի։

— Դե օր հ'մալ ա, էսա արծիլին առ, գիշեր օր տի քնի, էսա արծիլով կկտրես էն սըպտակ մազ։

Պառավն արծիլին տվեց կնգան, ու մնաս բարով ասաց ու հ'ելավ գնաց շուկեն։

Գնաց շուկեն, էտ կնդան իրիկ գտավ, բարև տվեց.—Մեռնիմ էտա ջահել բաբագիթ[2] տղին,—ասաց,—գացի ձեր փողնով կընցնի. աջեբ՝ մի տեսա։

— Աստված խերն էնա, մայրիկ, ի՞նչ աջեբ ա, ասա տեսնիմ։

— Լո, օր ասեմ, չըս ավտար, սիրտսի կտռտվավ՝ ղյուց էկա կասեմ։ Ձեր փողնի՝ օր հ'ընցա, մարթ մի տեսա ծեր տըռներու մեջ կանուկ, կզրուցեր քու կնգան խետ։ Մարթն ասաց քու կնգան՝ «Թե ընձի կսիրես, իսե ու խապեպայութեն չըս էներ, կիշերս ի օղյաթ[5] մի խաղցիր քու իրկան գլոխ, սպանա»։ Քու կնիկն ասաց՝ «Իմա՞լ ըսպանեմ, չախու չունիմ, դանակ չունիմ»։ Մարթն դանակ մի խանեց տվեց կնգան, ասաց՝ «Գիշերն օր կքնի, զգլոխ կկտրես, ու կելնիս հավար կէնես քի՝ վա՜խ գող էկեր ա իմ տուն։ Էտով կփրցիս, քեզի էլ բան մի չկա»։ Էտ մըլա ես լսեցի, օր էտ մարթ ասաց քու կնդան։ Սերն ի աստծուն էղնի, չէղնի իմ խոսքեր մըտահան էնես, չավտաս, ես բանմ' էր ասեցի քեզի, դուն կիտես, քու վերեն մուղաթ էղնիս, էս կիշեր չէղնի օղյաթ մի խաղա քու գլոխ, ափսոս ես։—Ու պառավ կնաց։

Իրիկուն էղավ, մարթ կնաց տուն։ Բան մը չը պատմեց ուր կնդան, խաց կերավ ու քնավ։ Զինք դրեց սուտ քուն, կխռեր, աչիչ տկով կիշկեր, տեսնա թի պառվու խոսք ըղո՞րթ է, թի սուտ է։

---

1 Ածելի (Ս. Բ.)։

2 Քաչ, կտրիճ (Ս. Բ.)։

3 Տարօրինակ (Ս. Բ.)։

4 Երն (Ս. Բ.)։

5 Փորձանք (Ս. Բ.)։

Սահաթ կնաց չորսին, ինգին, կնիկ տեսավ օր մարթ քնուկ էր։ Ճրաք բերեց կպուց, դրեց իրկան գլխու վերև ու արծըլին ծոցեն խանեց, ըրաց օր կզեր վըր իրկան մազ կտրեր, իրիկ շուտ մի ձեռ թալեց ու զէտոր բըլակ բռնեց.—Պառավ կասեր, ես չըավտի, էտ ի՞նչ օգլաթ է կխանես իմ գլոխ, դուն քեզի ուրիշ դոստ ես բըռներ ես, ընձի կուզիր ըսպանել, օր էրթեր դոստիտ առներ. Հա՜յ, անամոթ ֆոս[1], օր էմալ շատ կսիրես ուրիշներ, կթողնիմ զքեզի՝ կնա՛ առ։

Էտպես քըֆրով ու ծեծելով մնացին չուր խըլսուն։ Խըլսուն կանչեց մարթն զվարդապետ, զթաղեցիք ու թորկեց ուր կնիկ էտոնց հ՝առեճ։

Սատանեն էնտեղ կանուկ էր էլման, թամաշա կէներ էտոնց խաղքութեն, օր պառավ խաներ էր էտոնց գլոխ։

Պառավն էն տեխեն էկավ.— Սատանա՛,—ասաց պառավ,—տեսա՞ր իմալ էր, յոթ տարի աշխատար չկարցար բանմ՝ էրեցիր. յոթ սահաթ չքաշեց, իրիկ ու կնիկ տվեցի թողնել իրարուց, դե տո՛ւր ինչ օր խոստացար։

Սատանեն ասաց.—Ի՞նչ տամ քեզի, պետք ա օր դուն գաս, մեր ճժերուն սատանութեն դաս տաս։ Հ՝որի՞ն օր դուն խընձ մեկի սատանա էլար։

Էտմըլա ասելով, սատանեք թափան պառվու պոլոր ու գացին դժոխք։

Էն տեղ պառավն չուր մըկա հըլա դաս կուտա սատանեսներու ձըգերուն։

---

[1] Բող, պոռնիկ (Ս. Բ.)։